

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՎՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

Փետրուար 20, 1980

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ, Իսրայէլ

Ամենապատիւ Սրբազան Հայր,

Շնորհակալ ենք որ հեռագրով մը մեզ տեղեակ պահած էիք թէ ընթացիկ տարուան Յունուար 12ին ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ կը կայացնէիք մեր նախագահութեան 25ամակի՝ հանդիսութիւնը Ձեր բարձր հովանաւորութեամբ: Հանդիսութեան մանրամասնութեանց տեղեկացանք նաեւ մամուլէն, ուր ընդարձակ լրատրուութիւն մը երեւցաւ:

Մեզի մասնաւոր գոհունակութիւն կը պատճառէ այս հանդիսութիւնը որ կը կայանայ պատմական Երուսաղէմի մէջ, դարաւոր աւանդութիւններով հարուստ շրջապատէ մը ներս:

Մեր անկեղծ բաղձանքն է որ այսպիսի առիթներ՝ գործող անձերու հանդէպ գնահատանքի արտայայտութիւն մը ըլլալէ աւելի՝ դառնան Բարեգործականի նախահնամական առաքելութիւնը ոգեկոչող եւ Միութեան հաւատաւոր զանգուածը գօտեպնդող ձեռնարկներ:

Կ'ուզենք այս առիթով մեր գնահատանքն ու գոհունակութիւնը յայտնել Ձեզի եւ հանդիսութեան բոլոր մասնակիցներուն, Ձեր ազնիւ մտածումներուն ու նախածնունդութեան համար:

Ձեզի մաղթելով արեւշատութիւն եւ առողջութիւն, կը մնանք,

Խորին յարգանքով՝

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նախագահ

